

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ն

Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն Լ Ե Հ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Յ Ո Ց

Ը Ն Դ Հ Պ ՈՎ Մ Ի Ա Ն Ա Ն Ե Ե Կ Ե Ղ Ե Գ Ի Ն Ո Ց



ԹԱՅՔ ունին մէջերնին շատ գովելի բաներ, որոնք հետեւելու իսկ արժանի են. մասնաւորապէս Պսակին նկատմամբ՝ զոր միայն եկեղեցւոյ մէջ կը կատարեն (Թէպէտ աստ Լեհաստանի մէջ տարբեր կերպով կը կատարեն զայն)։ Դոր պսակեալք՝ առ ժամանակ մի խիստ ժոռակալութեամբ կ'ապրին, այսինքն ամբողջ շաբաթը կը տեսնուին և երեք օր՝ չեն տեսներ քնա գիրար։ Դոր ձեռնադրեալ քահանայից կը հրամայեն քառասուն օր ոտքի վրայ կայնիլ՝ նոցա բոլոր եկեղեցիք՝ երկու մասն կը բաժնուին, մին՝ վասն կանանց, զոր և ժամատուն (վերնատուն) կը կոչեն, և միւսն էրիկ մարդկանց համար. ասոնց նման դեռ ուրիշ գովեստի և ուշադրութեան արժանի բաներ ունին։

Իսկ այժմ, որ այս առաքելութեանն եկեղեցիներու վրայ պիտի խօսինք, այսինքն է, Թաթարաստանի, Մոլտաւիոյ և Լեհաստանի, գիտելի է որ հին ժամանակները, Այրարատ լեռան մօտ, ուր որ իրենցողէն վերջը Նոյեան տապանը կեցաւ, Անի անուամբ քաղաք մի կար, Ղարս և Coezala (?) քաղաքաց մէջ, որք այսօր բոլորովին աւերակ դարձած են. միայն մի քանի յիշատակարանք դեռ կը նշմարուին, ուր ըստ աւանդութեան երբեմն հազար եկեղեցիէն աւելի կային։ Աստի քաղթեցին Հայք 'ի Թաթարաստան, բայց այն ժամանակամիջոցն ստուգելը՝ գրեթէ անհնարին է. 600 տարիէն աւելի է Հայոց 'ի Ռուսաստան քաղթելն։ Քաղաքք և քաղթականութիւնք, որոնց մէջ Հայք իրենց եկեղեցիներն ունէին՝ հետեւեալքն են.

Կոֆա, երևելի նաւահանգստով, որ այժմ Թուրքաց՝ տէրութեան կը վերաբերի. ունի 24 Հայոց եկեղեցիներ և 23 քահանայ, 'ի բաց թողեալ առանց քահանայի մնացած լատինաց եկեղեցին։

Պուլէւլու, ուր Հայոց եկեղեցի մի և քահանայ մի կը գտնուին, ունի նոյնպէս նաւահանգիստ։

Պուլսարայ. Թաթար Խանի մայրաքաղաք, ունի եկեղեցի մի և քահանայ։

Խորասու (պուլս). Ունի մի եկեղեցի և եօթն քահանայ։

Քուլուս. Ունի Հայոց մի եկեղեցի և երեք քահանայ։

Օբու կամ (Պերեկոբ), հայերէն Ուլթերու (!), ունի մի եկեղեցի և քահանայ։

Ղէի Թերակղզին ունի 3 եկեղեցի և մի վանք։

Ասոնցմէ զատ՝ կը գտնուին Թաթարաստանի մէջ ուրիշ երկրորդական կարգի քաղաքներ, որոնք նոյնպէս իրենց յատուկ եկեղեցի և քահանայ ունին։

1. Այս տեղեկութիւնս կամ գլխովիմ ամենչոյ և կամ լոկ տեղական և մասնաւոր սովորութիւն ղամարեի է, և ոչ թէ ըմզմամուր։— Ծանօթ. Թրգմ։
2. Հեղիմակիմ այս տեղեկութիւնս՝ աւելի առասպելական կ'երևի_քան թէ ստոյգ։
3. Այժմ Ռուսիոյ կը վերաբերի. ուստի հեղիմակս կամ ղալամոսիմ հետևած է միւթապէս, և կամ Եփեսոսի եօթմ մամկանցմէ առած է իւր այդ տեղեկութիւնը, առանց ուշ գնելու վերջիմ քաղաքական և աշխարհագրական փոփոխութեանց։— Ծանօթ. Թրգմ։

Վերոյշեալ քաղաք և եկեղեցիք միոյ եպիսկոպոսի իշխանութեան ներքև կը գտնուին: Արդի եպիսկոպոսը մանկահասակ է, 35 ամեայ, ձեռնադրեալ Յակոբ կաթողիկոսէն:

Ընդ մէջ Թաթարստանի և Մուլաւիոյ կան դեռ քանի մի քաղաքներ Տաճկի (Ռուսիոյ) իշխանութեան ներքև, որոնք երբեմն Լեհաստանի արքեպիսկոպոսութեան Թեմի մի մասը կը կազմէին, տարածուելով գրեթէ մինչև 'ի Կ. Պոլիս, ինչպէս որ կը տեսնենք Իլվովի արքեպիսկոպոսներու ձեռնադրութեան նամակներէն. և այժմ իսկ այս քաղաքներս առաքելութեան կը վերաբերին, և մասնաւորապէս Աքերման, Իսմայիլ և Բէնդէրի, որոնք իրենց առանձին եկեղեցի և քահանայ ունին: Առաջին երկու քաղաքներն՝ նաւահանգիստ ունին, բայց երկքն ևս Մուլաւիոյ Հայոց Սահակ եպիսկոպոսին իշխանութեան ներքև կը գտնուին, որ Յակոբ կաթողիկոսէն ձեռնադրեցաւ 50 ամեայ հասակի մէջ, որ և գիւնայ սրտակից բարեկամ է:

Մուլաւիոյ քաղաքներն՝ ուր Հայոց եկեղեցիք կը գտնուին, հետևեալքն են: Եւստի կամ Եւստի իշխանին աթոռանիստ քաղաքը, ունի Հայոց վերաբերեալ երկու եկեղեցի:

Կուլոց, ունի նաւահանգիստ. և մի հայ եկեղեցի:

Վուլով, մի հայ եկեղեցի:

Սերուր, նոյնպէս մի հայ եկեղեցի:

Սելով, ունի երկու հայ եկեղեցի և վանք մի:

Խոջի, ունի մի հայ եկեղեցի:

Ռոբանի, նոյնպէս մի հայ եկեղեցի:

Բոչիան, մի եկեղեցի:

Մուլաւիոյ բոլոր եկեղեցեաց մէջ 24 քահանայք կը գտնուին, Սահակ եպիսկոպոսին իշխանութեան ներքև:

Յամի Տեառն 1062, Քէրոզս Ռուսաց իշխանը, Դեմետրի որդին, վարելով քաղաքական պատերազմ իւր հպատակաց հետ՝ որ իրմէ ապստամբեր էին, կուչեց յօգնութիւն գլխայ 'ի Թաթարաստանէն, և աղաչելով որ աստ Ճան՝ պարզեց անոնց շատ արտօնութիւններ. բայց յետոյ Լեհաստանի Թագաւորք տիրելով Ռուսիոնաց (Rus'), վերստին զանոնք հաստատեցին: Հայք՝ բնակեցան Մուլաւիոյ. կարմիր Ռուսիոնաց գաւառին և Ռաբրայիսայի քաղաքաց մէջ. այսինքն է՝ 'ի Քիււ, 'ի Լուցք, 'ի Իլվով, 'ի Կամենից, 'ի Վլոսիմիր, 'ի Հայուչ, 'ի Սնիսդին, և դեռ ուրիշ քաղաքաց մէջ, ուր այսօր ոչ Հայոց եկեղեցի և ոչ իսկ հայ ժողովուրդ կը գտնուին: Հայք՝ գաղթեցին յերկիրն կարմիր Ռուսիոնաց, նոյն երկրին արևելեան ծիսով քրիստոնէական հաւատքն ընդունելէն 82 տարի վերջը, յամին իբր 980. և 107 տարի վերջ՝ երբ Լեհաստան հռովմէական ուղղափառ հաւատքն ընդունեցաւ, այսինքն է յամին իբր 988. և 324 տարի առաջ քան զվկրտութիւն 'ի սուրբ հաւատս Լիթուանիոյ գաւառին, յամին իբր 1386:

Քաղաքք և եկեղեցիք Հայոց 'ի Լեհաստան, այսինքն է, յԱրքայիսայ, 'ի Կարմիր Ռուսիոնաց, 'ի Պոզուլ, 'ի Պոկուցիէ, և այս հասարակապետութեանս ուրիշ տեղեաց մէջ՝ հետևեալքն են:

Կիւ կամ Քիւ՝ ունի հայոց եկեղեցի մի. բայց որովհետև քաղաքը Յունաց ձեռքն է (այսինքն է՝ յունադաւան ծիսով), այն պատճառաւ հայ ազգէն քիչ անձինք կը գտնուին հոն:

Լուցք քաղաքն՝ ունի եկեղեցի մի և քահանայ, Տէր Անտոն անուամբ՝ ծնեալ 'ի Կամենից, զոր տարի մի առաջ ձեռնադրեց Քորոսովիչ՝ Իլվովի արքեպիսկոպոսը: Քանի մի շարաթ Ճնաց պապական վարժարանին մէջ յիլվով, ուր կըր-

Թուեցաւ աստուածարանութեան և սուրբ հաւատոյ ինչ ինչ խնդրոց մէջ, ինչպէս նաև սուրբ խորհուրդներն մատակարարելու: Բայց երբ վերոյիշեալ եկեղեցւոյն առաջնորդ դրուեցաւ՝ մի անգամ իսկ թուղթ չգրեց առաքելութեան զացող քահանայից: Խիստ քիչ անգամ սյառարաց կ'ըսէ, և վարքով չի համապատասխաներ իր կոչման, և կը տեսնուի թէ այնպիսի անձ մի է՝ յորմէ առաքելութիւնը իր բան մի չկարէ յուսալ: Լուսք քաղաքը, կիլիկի վերլը, Հայոց արքեպիսկոպոսին աթոռանիստ քաղաքն է. բայց այժմ՝ գրեթէ ոչ ոք կայ Հայոցմէ:

Կէսերէն քաղաքը՝ մինչև ցայժմ իբրև անտիկ կը համարուի, և որովհետև Թագաւորութեան սահմանազիւսին վրայ է, առաջապահ պարիսպ քրիստոնէութեան կոչուած է: Այս քաղաքս՝ ունի Հայոց չորս եկեղեցի, այսինքն է, Վերա փրահն Ս. Արամօթօնի, որ և արքեպիսկոպոսական եկեղեցի է, Ս. Նիկողայոսի, Ալեքսան և Ս. Ստեփանոսի: Վերլին երկուքը փոքրագոյն են, գրեթէ մատուռ համարուած են. բայց երկու առաջինները՝ մեծ են և հարուստ, և անբաւ ոսկի և արծաթ նուէրներով զարդարուած: Եկեղեցիներուն մօտ՝ շատ առններ կան, օտար եկեղեցւոյ կը վերաբերին, որոնց մէջ մին շատ երեսելի է. այսինքն է, Ս. Նիկողայոսի գերեզմանոցի քով գտնուողն, որուն մէջ շատ ատենէ՛ ՚ի վեր բռնակութիւն չկայ, և այն պատճառաւ իբրև անիծեալ կը համարուէր: Ոմանք կ'ըսեն, թէ աստ պիտի կարենային հաստատել պապական վարժարանը՝ եթէ յիշով յարմար տեղ չգտնուէր: Եւ յիբաւի, ուսումնական ընթացքին համար խիստ առ տեղ պիտոր լինէր, այնու մանաւանդ, որ կամենիցի երիտասարդութեան մէջէն փափաքողք կը գտնուէին եկեղեցական վիճակի, որով նաև յոյս կար, թէ ատենօք Մոլտաւիոյ Հայք իսկ՝ իրենց որդիքը պապական վարժարանը պատի տային. բայց միւս կողմանէ՝ առաքելութիւնը չպիտի կարենար մեծ յառաջդիմութիւններն ընել: Արքեպիսկոպոսին՝ բացական լինելուն պատճառաւ, որ մայրաքաղաքի մէջ կը նստէր, ուսի և դիւրին կերպով կարելի էր օգնութեան հասնիլ ուրիշ եկեղեցիներուն: Քաղաքէն զատ՝ մօտակայ դիւղաքաղաքաց մէջ ևս դեռ կը գտնուին չորս կամ հինգ եկեղեցիք. բայց որովհետև երկայն ժամանակ երեսի վրայ թողուած էին, Լատինացւոց ձեռքն անցան, բաց ՚ի Ս. Գրիգորէ և Ս. Խաչ եկեղեցիներէն: Ընդ ամէն եօթն քահանայ կը գտնուին կամենիցի մէջ, ամէնքը ամուսնացեալք են, որոց մեծաւորն է Տէր Ներսէս, որ գրեթէ ութնամեայ է և այս ժամանակամիջոցիս շատ միտումն կը ցուցնէ առ հռովմական եկեղեցին. բայց յառաջացեալ հասակի մէջ լինելով և թոյլ սիրտ ունենալուն պատճառաւ՝ ամենեկին նշանակութիւն չունի... Ի թիւս այոց՝ կայ նաև Տէր Գրիգոր, բարձրահասակ, 65 ամեայ, որ ուրիշներէն աւելի առաքինի կենսք կը վարէ, բայց գրեթէ միւտ հիւանդ է և առողջութեան կողմանէ տկար: Տէր Միտայել, այր խմատուն և տեղեակ լատիներէն լեզուի, թղթախաղի և այլևայլ զբօսանաց սրտակից բարեկամ, որ և այժմ իսկ իւր տանը մէջ խորտկարան մի բացած է սուրբ Նիկողայոսի եկեղեցւոյն մօտ... միով բանիս խորազգու և կեղծաւոր մէկն է. և ըստ կարծեաց բազմաց՝ Ներսէսի մահուցնէ վերջ, ինքն կը փափաքի մեծաւորութեան պատուայն հասնիլ: Գեռ ուրիշ քահանայք ալ կը գտնուին հօս, ինչպէս Տէր Թուգորոս, Տէր Զուրբի, Տէր Գրիգորէ և Տէր Թովմա՝ որդի վերոյիշեալ Տէր Ներսէսի, որոյ վարքը վիճակին չի համապատասխանար, այն պատճառաւ ժողովուրդն իսկ իրմէ օժտացել է: Քահանայիցմէ զատ՝ կան նաև տասուերկու ազգային մայրապետք, որոնք թէ և վանական արեմ հազած են... սակայն կ'ապրին առանց կանոնի, և ազատ կենսք անցնելով վաճառականական յարաբերութեանք կը զբաղին: Քաղաքին մէջ կայ նաև Միտայել Ուլտիոսի լատին ծխավ կանոնիկոսն, կամենից քաղաքին

կառավարչին հարազատը, որ ստէպ ստէպ կ'այցելէ Հայոց եկեղեցիներուն, ջանալով որ եկեղեցեցւոյ կանոններն և ներմուծուած բարեկարգութիւններն ճշուրդի պահուին:

Եւրոպոյ գիւղաքաղաքը՝ խիստ երևելի է տօնավաճառներու պատճառաւ, որ ամէն տարի կը կատարուի 'ի վերջ կոյս փետրուար ամսոյ, ուր կու գան յարեւելք և Հայք խուռն բազմութեամբ: Այս տեղի Հայք, ուրիշ քաղաքներէն աւելի հարուստ և պատուաւոր են, բայց կրթութեան կողմանէ ստորնադոյն են: Երեք բարեպաշտ և կրօնատէր հայ կրօնաւորք կան 'ի Եւզլովցա, որք իրենց տան մէջ կ'ապրին: Հինգ քահանայք կան, յորոց առաջինն, այսինքն է, 65 ամեայ Տէր Աբրահմ, կարգուած է և հիւանդատ, և բնաւ կրթութիւն չունի. Տէր Յակոբ 40 ամեայ՝ նոյնպէս կարգուած և շատ զուակ ունի. Տէր Յովհաննէս զեռ չէ կարգուած, 35 ամեայ, այր իմաստուն և հանճարեղ, և Տէր Ստեփանոս նոյն տարիքի մէջ, նոյնպէս այր իմաստուն և խոհեմ: Այս երկու վերջինքս՝ եկած են հոս, Տէր Կալանոսին յիջով գտնուած ժամանակ. սորա՛ իրենց տգիտութեամբ հանդերձ, ամենայն կերպով ջանացին, որ արքեպիսկոպոսը ձեռնադրէ զիրենք. բայց երբ Տէր Կալանոս հակառակ կեցաւ այս խնդրոյս, ստիպեցին զիրենք, որ քանի մի ամիս հայերէն լեզուի և բարոյական աստուածաբանութեան մէջ վարժին. յետոյ սպա ձեռնադրուեցան, և այժմ քահանայական միճակի մէջ գրգռելի վարուք կ'անցնեն օրերին: Հինգերորդ քահանայն Տէր Արտուրդուր Աբրահմ, մեծաւորի որդին, 24 տարեկան է, երևելի աստուածաբան և քարոզիչ այն եկեղեցեցւոյ. բարեպաշտ և կրօնատէր պատուելի մի է, ունի նաև դրպարոց մի, որ 50 աշակերտի չափ կը կրթէ սուրբ հաւատոց և աստուածային երկրորդի մէջ, ինչպէս նաև կ'ուսուցանէ հայերէն և լատին լեզուները: Կայր նաև հոս ուրիշ քահանայ մ'ևս Տէր Արիստակէս, նոյնպէս կարգուած, 46 ամեայ. բայց այժմ անցաւ 'ի Կամենից, իր ամուսնոյն ծննդեան քաղաքը: Կը գտնուին սոս քաղաքին մէջ զեռ շատ յունադաւան եկեղեցիներ. Լատինացոց մատուռն՝ Ժողովրդապետական եկեղեցոյ տեղ կը ծառայէ, բայց հոն երկու կամ երեք անգամ տարուկ մէջ պատարագ կը մատուցանի. կայ նաև Գովինիկեանց վանք մի, որուն առաջնորդը կրթեալ, ուսումնական և նշանաւոր մարդ մէ: Վերոյիշեալ քաղաքը Կամենիցի եպիսկոպոսին իշխանութեան կը վերաբերի. բայց միւս երեք քաղաքաց պէս՝ Լեհաստանի Թագաւորութեան չեն վերաբերի, այլ մեծապատիւ Կոնէցրոլքի իշխանի միոյ՝ որ Լեհաստանի ազնուաւորք ընտանեաց մին է:

Միւրքին՝ Թագաւորական քաղաք, իլվովի արքեպիսկոպոսին թեմի մէջ կը գտնուի, և մի օր հետու է Եւզլովցայէն. ունի եկեղեցի մի Հայոց և քահանայ Տէր Թէոդորոս անուամբ, 46 ամեայ, կարգուած և կրթութեան կողմանէ ալ շատ ետ է. աղքատ քահանայ մ'է, վասն զի քիչ Ժողովուրդ ունի, և որդւմութեամբ կ'ապրի, զոր Եւզլովցային Հայք կ'ընձեռեն իրեն, որոնք նաև եկեղեցեցւոյ հոգաբարձութիւնը վրանին առած են: Վերոյիշեալ Եւզլովցային մեծաւորն Տէր Յակոբ՝ իր վերջին այցելութեան ատեն խոստացաւ Տէր Թէոդորոսին, թէ կամ բերանացի կամ գրաւոր կերպով աղերսագիր մի պիտի մատուցանէր Սոպիէքիին Լեհաստանի մեծ սպարապետին, որպէս զի զինքը ամէն նեղութիւններէ ազատէ, որոնք գրեթէ ամէն օր կը տաճապալէին զինքը, ինչպէս նաև զինուորաց արշաւանքներէն, որք ամէն օր իւր տանը կ'այցելէին:

Մրախլա քաղաքը կը վերաբերի Անգրէաս Պատոյքի Կիւեի իշխանին, զոր նա ինքն վերստին բարեկարգեց: Ստանիսլաւ քաղաքի Եւզլովցայէն լեհացի ութ մղոն հեռու կ'իյնայ. այսինքն է, մի օրուան ճամբայ, և իլվովի արքեպիսկոպոսին թեմի մէջն է. ունի Հայոց եկեղեցի և քահանայ մի, Տէր Գրիգոր Բալ-

սամ Իլլովցի, ամուսնացած: Տէր Կղեմէսի աշակերտ է, մեր Դանքով ձեռնադրուեցաւ, և եթէ չեմ սխալիր 32 ամեայ է: Գիտէ լաւ տանկերէն, թաթաւրերէն, լատիներէն, և հայերէն. գրարար լեզուին ևս հմուտ է, քաղ ախոյեան սուրբ հաւատոյ, որուն ապացոյցը՝ զանազան առիթներու մէջ տուաւ, մանաւանդ երկու տարի առաջ՝ ի Վարչախա, ուր ըստ յանձնարարութեանս Կամենցի Հայոց դէմ, որոնք միութեան հարկաւոր բարեփոփոխութիւնը ընդունել չէին ուզեր, այնպիսի ճարտարութեամբ յարմարցուց իւր գործը, Պինեստեպլի առաքելական նուիրակին և Թագաւորական քարտուղարի հետ, որ բերանացի կերպով համոզընելով Հայոց նուիրակները՝ զարձաւ մեծաւ փառօք և հարկաւոր հրովարտակներով՝ ի Կամենից, որոնց օգնութեամբը՝ միութիւնը յաջողութեամբ կատարուեցաւ:

Շարունակի:

Վ Ե Ց Օ Ր Ե Ա Յ Ք

ՊԻՍԻԴԵԱՅ ԻՄՍԱՏԱՍԻՐԻ



ՁԵԿՈՒՑՈՒՄԸ

Գէորգ Պիսիդէս կամ Պիսիդացի՝ սարկաւազ և քարտուղար մեծի եկեղեցւոյն Կոստանդնուպօլսի յեօթներորդում դարու, առ Սարգսաւ պատրիարքաւ կայսերական ոստանին, բաց ՚ի սակաւուց այլոց մանունց՝ գրեաց ՚ի չափական տողս և զառաջիկայս քերթուած Վեցօրէից կամ զարարչագործութենէ ախարհի, յաւէտ իմն իրբ լայնածաւալ պարզաբանութիւն ՃՊ. Սաղմոսացն Դաւթի:

Յաւուրս երրորդի թարգմանչացն մերոց հելլենաբանից՝ երևի յեղեալ և սուրայս քերթուած ՚ի հայ բարբառ, որում վկայեն ակնյայտնի յունախառն ոճ լեզուին և առունը իմաստից բառիցն, այլովքն հանդերձ, մինչև չթողու երկբայութիւն՝ բայց միայն զանուանէ թարգմանչին անծանօթի, զոր ինձ ախորժեի թուի զՄիւնեցին հաւատալ Ստեփանոս, զթարգմանչին Նեմեսեոյ և Նիւսացւոյն գրոց:

Պատահիկ մի ևեթ (տողք 84) նշխարեալ մնայր առ մեզ ՚ի թարգմանութենէ քերթուածոյս, զոր և յօգուտ բանասիրաց հրատարակեցաք ՚ի Բազմավէպ Հանդիսի ամօք յաւաթ (1873, էջ 123). այլ գիտելով զի մեծագոյն ևս նշխար ամբարեալ յարգի ՚ի մատենադարանի Մեծարգոյ Անտոնեան Հարց՝ ՚ի Միլնագեղջ Կոստանդնուպօլսի, ամաւ յառաջ պատեհաւ խնդրեցաք ՚ի նոցանէ ընդօրինակել զնոյն: Իւ նոցա՝ փափաքանօք դեռ ևս ծածկելոյ զանձուն ՚ի յայտ գալոյ, զիջեալ սիրայօժար առ խնդիր Վեհազունի Գլխոյս՝ շնորհեցին մեզ ըզհաւասար օրինակ ձեռագրոյն. զոր ՚ի հրատարակելս՝ աստէն արժան համարիմք և զյայտնի շնորհակալիս մեր և զամենեցուն սիրողաց նախնեացն մերոց երկանց՝ մատուցանել առ վերոյիշեալ յօժարողս հրատարակմանն:

Որպէս տեսանի ՚ի ստորն՝ պակասաւոր է օրինակն թարգմանութեան ոչ միայն ՚ի սկիզբնն, այլ և ՚ի միջավայրն ուրեք ուրեք, և յաւէտ ՚ի վերջ կոյս քերթուածոյն: Զպակաս տողս նշանակեմք առերի թուահամարօք՝ որք ցուցանեն զթիւ տողից յոյն բնագրին, ըստ որում ՚ի տողս առոյս գրութեցաք և զմիս.